

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա

Տարեկ. 10 ֆր.


Վեցամս. 5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

ԿԱՆԽԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ
չեն պրութիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Դ՝ ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 27 ՇԱՐԱԹ 1900

ԹԻԻ 164

ՀԱՌՐԶԱՎԱԼԻՔ

«Հայերի» ծառայը մեծցնելուս առթիւ թէ՛ Պուլկարիայէ և թէ՛ արտասահմանէ զրկուած համակրական քառթերուն ու նամակներուն ի պատասխանի մեր ջերմ շնորհակալիքը կը յայտնենք:

ԽՄԲ.

ԶԱՓԸ ԱՆՑԱԾ

Տասնեակ տարիներէ ի վեր Տօն Քիշուրի արժանաւոր զաւակները երամ երամ կը վխտան արտասահմանի ամեն կողմը:

Հեռի արկածալից Մայր երկրէն, հեռի արեան կոհակներու արհաւիրքէն, արտասահմանեան գարեջուրի փրփուրներուն սնունդով կեղծ շովիններու թիւը կը բազմապատկի ամեն օր եւ ամեն րոպէ:

Անոնք սունկի պէս կը բուսնին եւ վիթխարի համեմատութիւն մը կը ստանան, միայն իրենց ստոր կաշին քաշքշելու սահմանուած:

Գացէ՛ք Ամերիկա, գացէ՛ք Եւրոպա, գացէ՛ք արտասահմանի ամեն կողմ ու գարեջրատանց և անխոտովանելի վայրերու քառեակ պատերէն լսեցէ՛ք պատմութիւնը այն ամեն պազշտ արշաւաքներուն, որոց անորակելի դիւցալուններն եղած են անոնք:

Իրենց անձնական կենցաղն է ասի. իսկ հանրային գործերու համար՝ «նպատակը միջոցը կարգարացնէ» Լօյսլայի այս վարդապետութիւնն է, որ կը տիրէ այդ կուսակցամոլներու մտքին վրայ իր ամեն տխուր հետեւանքներովը:

Զարկ, փճացուի, ինչ որ քու կուսակցութեանդ չը պատկանիր, ահա այն գիււհար յան-

կերգը, որ ամեն ուռած կոկորդներէ կը պոռթկայ ազդուապէս, մէկ մէկու համար, մէկ մէկու դէմ, Ամեն սրբութիւն, ամեն ազնիւ նկատում: ամեն պատշաճութիւն տարաբաղդ զոհերն են օրուան այս դիշատիչ նորաձեւութեան:

Զրկայ բան մը որ ազատի ատոնց ակռաներէն, որ՝ առաջ, ինչպէս ըսեր ենք ուրիշ առթիւ մըն ալ, տրուած են մի միայն եղբայրասպան կռուի մը երանգը թարմացնելու, կարմիր, արեան չափ, կարմիր:

Այսօր կը տեսնես որ, ատոնք եկեղեցին ու եկեղեցականները ճիւղալային հալածանքի մը մատնած, քիսքո, խախաւ, մօլլա, իմաւ ևն. տիտղոսներով կը մտրակեն ու ամեն պատշաճից օրէնք, ամեզ քննադատական սրբութիւն ոտքի տակ կառնեն և վազը նոյն այդ եկեղեցիին մէջ և նոյն այդ եկեղեցականներով օրհներգութեան ալէլուներ զրկել կուտան երկիրք աս ու ան հերոսի յիշատակին համար. . . .

Ինչ դառն հեղեղութիւն:

Այսօր «մատնութիւն է» կաղաղակեն խաչագողութեան մը հրատարակումը և կեղծաւորներու գիմակին մերկացումը և վազը կելլեն իրենք իսկ սրտի կատարեալ հանդարտութեամբ, այնպիսի մատնութիւններ կընեն, որոց վերջուլումն անգամ սարսուռ կաղդէ մարդուս:

Լսեցէ՛ք. «այս ինչ թուականին այն ինչ կուսակցութեան կը պատկանէր» կըսեն. բարձրատիճան եկեղեցականի մը համար, որ տակաւին ծածկատան կը գտնուի. . . .

Կըսեն, ոչ թէ փախուքով, այլ հրապարակաւ և թերթերու մէջ. . . .

Կուզէ՛ք սոսկացէ՛ք, կուզէ՛ք սարսուացէ՛ք. իրողութիւն մըն է այս. մատնութիւն մը և. . . չափը անցած մատնութիւն մը:

ԾԱՆՕԹ.

ԱՅՎԱԶՈՎՍՔԻԻ ԿՏԱԿԸ



ԱՅՎԱԶՈՎՍՔԻԻ ԿՏԱԿԸ

Թէոդոսիայէն կը գրեն թէ, ահագին ցաւ պատճառած է Այվազովսքի մահը բովանդակ քաղքին: Յայտնի է արդէն որ հանգուցեալ արուեստագէտը մեծ բարերար մը եղած է իր քաղքին համար, զայն օժտելով գիւրակեցութեան բաղմամբիւ պայմաններով:

Իր կտակին համաձայն, հանգուցեալ մեծ ծովանկարիչը Թէոդոսիա քաղաքին կը թողու իր նկարչական Կալէրիային զոր ինք հաստատած էր տարիներ առաջ, եւ որուն մէջ իր նկարներէն բաւական ստուար մաս մը ցուցադրուած է: Այվազովսքի շէնքին հետ միեւնոյն ատեն քաղքին կը թողու Կալէրիային մէջ գտնուող բոլոր նկարներն ու արձանները, ինչպէս նաեւ կարասիները, պայմանաւ որ քաղաքը բնաւ իրաւունք չստանայ զանոնք ծախելու, եւ Կալէրիային մուտքէն դուրս նալիք հասոյթը յատկացնէ տեղական բարեգործական ընկերութեան: Փափաք յայտնած է նաեւ որ Կալէրիային վարչութիւնը յանձնուի իր արժանաւոր թողներէն կամ թողնորդիներէն մէկուն:

Թէոդոսիա քաղաքին Թաղապետական խորհուրդը որոշեց հետեւեալ կերպով մասնակցիլ Այվազովսքի թաղման:

1.—Բովանդակ Թաղապետական խորհուրդը ներկայ պիտի գտնուի յուղարկաւորութեան:

2.—Հանգուցեալին դագաղին վրայ պիտի դրուի պսակ մը՝ հետեւեալ արձանագրութեամբ. «Թէոդոսիա քաղաքին փառքին ու պարծանքին, անոր առաջին պատուաւոր քաղաքացւոյն՝ Իվան Կոնստանդինովիչ Այվազովսքի, Թէոդոսիա քաղաքին կողմէ»:


3.—Քաղաքային բոլոր շինութիւնները պէտք է սեւով պատել ի նշան սգոյ, իսկ թաղման թափօրին անցներէք ճամբան ամբողջովին ծածկել կանանչով:

4.—Հոգեհաց պիտի պատրաստուի 1000 հոգիի համար:

5.—Հոգեհանգիստ պիտի կատարուի հանգուցեալին բնակարանին մէջ, եւ Թաղապետա-

կան խորհուրդը ամբողջովին ներկայ պիտի գտնուի հոն:

Ապրիլ 24-ին հանգուցելոյն մարմինը փոխադրուեցաւ նկարչական Կալէրիային սրահը՝ որուն պատերը իր իսկ նկարներով ծածկուած են ամբողջովին: Մինչեւ աղբականներու ժամանումը մարմինը՝ որ զմուռած է արդէն, հոն պիտի մնայ. ահագին բաղմամբիւն մը ամեն օր կայցելէ և կը համբուրէ հանգուցելոյն ձեռքը: Բաղմամբիւ Եալթայիցիներ Թէոդոսիա կերթան վերջին անգամ մըն ալ տեսնելու համար հանգուցեալը: Մոսկուայի Հայերն ալ շքեղ պսակ մը ղրկած են:



—Խառն ժողովոյ որոշմամբ ծանուցուեցաւ եգիպտոս թէ առաջն, ընտրութիւնը օրինաւոր ճանջուած և վաւերացուած է: Եւ թէ նորընտիր առաջնորդը Յովսէփ Եպիսկոպոս, Այվազեան ի մօտոյ ճամբայ պիտի ելլէ դէպ ի իր պաշտօնատեղին:

—Վանայ Հայոց—Ձորի երկու գիւղերու եկեղեցիները ինչպէս նաեւ Շատախի մէջ եկեղեցին՝ որոնք ասկէ առաջ այրած էին, վերանորոգուեր են զորս օժեր է Ալթամարայ կաթողիկոսական տեղապահը:

—Ալգ. Հիւանդանոցի հոգաբարձութեան անդամները սիկաուի թուղթը Հիւանդանոցի մէջ պատրաստել տալու բանակցութիւնները աւարտած ըլլալով, երկուշաբթի օրը այդ աշխատանոցին համար յատկացուելիք տեղը որոշեր են. թուղթի մեքենաները և գործաւորները պիտի տեղաւորուին այրերու հիւանդարանին տակ, արդի մոմարանի տէփոյէն եւ մատենադարանին մէջ:

—Ռումանական շոգենաւ մը որ արմալիք բեռցած Պոլիս հասած էր, մաքսային նոր ոսկացոյցի պայմաններուն չի համակերպելով, ապրանքները նորէն Ռումանիա փոխադրեց:

—Անատոլի երկաթուղիներու ընկերութիւնը սկսած է մեծամեծ գիւրութիւններ ընծայել տեղական արմտիքներու փոխադրութեան համար:

ԴԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ՎԱՌՆԱՅԻ ՏԻԿՆԱՆՑ ՄԱՍՆԱՃԻԻՂԸ

Անշուշտ կը յիշեն մեր սիրելի ընթերցողք «Հայ-
յեղի» 13 նոյ. 1899 և 136 թիւով հրատարակած այն
մէկ բանի տողերը, ուր ի մէջ այլոց ըսուած էր որ՝ «Տիկ-
նանց մասնախումբ մը տեսնելով որ իր հաւաքած ու
յանձնած գրամները հակառակ ծրագրի տրամադրութեան
օսկան թերթին միջոցաւ մինչև ցարդ չէ հրատա-
րակուած, մալախի սիւ կասկածի են բռնուած՝ յուռա-
հատ որոշեր է գործէ քաշուիլ»։ Մեր այս գրածը այսօր
կուգայ նուիրաբործել տեղոյս Պալքանեան կոմիտէի
Տիկնանց մասնաձիւղը իր հետեւեալ պաշտօնական յայ-
տարարութեամբ, որով գոհացում ալ կը տրուի (·) «Հար-
ժում» 182 թիւով Պ. Վարդօի խնդրէն անսեղեակ
ձեռնամաղով մեզի ուղղած ծիծաղելի հարցումին։

... Խմբագիր «Հայելի» հանդէսի,

Հաճեցէք Ձեր թերթին յառաջիկայ թուոյն մէջ
հրատարակել հետեւեալը, որոյ համար կանխաւ կը
յայտենք մեր շնորհակալութիւնը։

Յարգանքով

1900 Մայիս 13

ՏԻԿՆԱՆՑ ՄԱՍՆԱՃԻԻՂԸ

Վառնա

ՄԵՐ ՊԱՏԱՍԻԱՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Շուրջ երկու տարի առաջ գոյութիւն ունեցող Վառ-
նայի «ԱՐԱՆՈՅՍ» Տիկնանց մասնախումբը, Օժանդակ
Մասնախումբ լինելով, իր գանձած գրամները յանձնած
է տեղական կոմիտէի կողմէն ներկայացող Պ. Առվա-
խիի և Պ. Գայազատէի, փոխարէն ընկալագրեր ստանա-
լով կոմիտէին։ Իսկ Քօնսէրէ գոյացած հասցիներն տոմ-
սակներու վաճառումը կոմիտէի անդամներու ձեռքով ե-
ղած է, և Տիկնանց Մասնախումբին հաշուեցոյց մը մի-
այն ներկայացուած։

Տիկնանց Մասնախումբին կողմէ կոմիտէի յանձնուած
գումարներու մասին պաշտօնական դիմում եղած է Գրաշ-
նակցութեան Օրկան «Գրօշակ»-ի մէջ հրատարակման հա-
մար, սակայն դժբաղդաբար հակառակ իրենց պաշտօնա-
կան խոստմանց, մինչև ցարդ տեսնուած չէ, պատճառը
ԱՆՀԱՍԿԱԼԻ է մեզ։

ՀՐԱԺԱՐԵԱԼ ՏԻԿՆԱՆՑ ՄԱՍՆԱՃԻԻՂԸ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

ԹՈՒՐԲԻՈՅ ՄԱՔՍԱՅԻՆ ՆՈՐ ՍԱԿԱՑՈՅՑԸ

Արժան կը համարինք հրատարակել հետեւեալ սա-
կացոյցը, որ Պուլկարաբնակ մեր վաճառական ազգայնոց
համար ալ կարեւոր է։ Սոյն սակացոյցը որ վաւերացուած
է Իրատեով, Ռումանիայէն զրկուած ապրանքներու հա-
մար սկսած է արդէն գործադրուիլ. իոկ Յունաստանի,
Պուլկարիոյ, Սերպիոյ և Սեւ լիւրան համար ալ Յունիս
1էն պիտի գործադրուի։

Ողջ Անաստուն՝ — Խոյ, ոչխար և մաքի՝ իւրա-
քանչիւրէն 16 դր. նոխալ (թէքէ) և այծ՝ 20 դր.
գառն և ուլ 10 դր. խոզ 60 դր.

Արմէիք եւ Ընդէդէն՝ — Ցորեն, իւրաքանչիւր 100
քիլոյէն 30 դր. վարսակ, հաճար, գարի, եղիպ-
տացորեն, կորեկ և սև ցորեն՝ 20 դր.

Աղացում եւ փշրում ճիւղեր — Ցորենի ալիւր՝
հարիւր քիլոյէն 60 դր. վարսակի, գարիի, ե-
ղիպտացորենի և այլ զանազան կարգի արմաթ-
ներու ալիւր՝ 30 դր. Չաւար (պուլկուր), կորկոտ
(իրմիկ) և այլ զտուած ցորեններ՝ 40 դր.

Գիւղասնեստակաւն առաքումքիւն՝ — Կարագ-
(թարմ և աղած) Սիպերիական կարագ և այլ ար-
հեստական իւղեր՝ հարիւր քիլոյէն 200 դր.

Պանիր (աղած, գաջգալալ, գաշէր, թուլում և
այլք) հարիւր քիլոյէն 150 դր. ճարպ (իշ եաղի)
և նմանօրինակ արհեստագործութեան յատուկ և
ուտելու անյարմար իւղեր՝ 100 քիլոյէն 75 դր.

Ուխտից ընկերիք եւ Գաջախ — Հասարակ գինի,
խաղողէ և մրգեղէններէ պատրաստուած քաղցու-
(տակառի կամ տիկի մէջ) հարիւր քիլոյէն 450 դր.
(չիշերու մէջ) 600 դր. Գաջախ (տակառի մէջ) հա-
րիւր քիլոյէն 75 դր. (չիշի մէջ) 150 դր. Աւթօլ
(տակառի մէջ) հարիւր քիլոյէն 300 դր. Քօնեաք,
օղի, բոմ և այլ անուշ կամ համեմեալ ըմպելի-
ներ (տակառի մէջ) հարիւր քիլոյէն 600 դր. (չի-
շի, թակոյկի կամ տամէճանայի մէջ) 800 դր.

Կարմիր պղպեղ՝ հարիւր քիլոյէն 250 դր. Չու-
աններ ամեն տեսակ, հարիւր քիլոյէն 100 դր.
Փոկ (գօլան) սանձ 180 դր. Շալագ, ապա և այլ
բրդեղէնք և բամպակ 600 դր. Խոշկաղին 250 դր.
Օճառ ամեն տեսակ, հարիւր քիլոյէն 240 դր.

Խաղող, նարինջ, լեմոն, կանանչ ձիթապտուղ և ու-
րիշ թարմ պտուղներ հարիւր քիլոյէն 60 դր.
Թուզ, նուշ, պիստակ 80-180-300 դր. Դդումի
կուտ, ընկոյզ, կաղին ևն. 80. Չամիչ, արմառ ևն. 240.
Աղած ձիթապտուղ՝ 180. Չէթ տակառի կամ տի-
կի մէջ 100. չիշի և սափորի մէջ 450. Մորթ՝ 600.
Դունաւոր քէօսէլէ թամբագործներու յատուկ 750.
Կօշիկի յատուկ զանազան մորթեր 1000. գունա-
ւոր, նկարուն յղկուած՝ 1200. Սպունգ, առագաս-
տի լաթ, դերձան՝ մինչև 20 թիւ հարիւր քիլոյէն
1500 դր. Բամպակեղէն նիւթեր՝ 240 դր.

Պ Տ Ո Յ Ց

ԲԱՐԻՁԻ ՍՐՈՒՆԵՍԱՀԱՆԴԻՍՈՒՆ ՄԷՁ



2

Բարի, ֆաղսիին տաղաւար: —Արուեստահան-
դէսին մէջ. Բուռ լա Ռէնի վրայ իրեն յատուկ
տաղաւարը ունի Բարիդ, ուր կը ներկայանայ իր
անհամար ակնկալներով և թանկագին հնութիւն-
ներով: Մասնաւոր յանձնախումբ մը ահա, սնէր ամ-
բողջ աշխատած, ամեն ջանք ի գործ դրած է
նոյն իսկ թագաւորներու և կայսրերու դիմում
ընելով՝ հաւաքելու համար Փրանսայի հնութեան
վերաբերեալ ամէն կարգի առարկաներ ու նը.
մոյշներ: Իր ջանքերը պսակուած են լիւրժի, այն-
պէս որ ստիպուած է նոյն իսկ շատ մը մատու-
ցումներ մերժել: Հաւաքածոն շնաշխարհիկ բան
մը եղած է, կարելի չէ ուրիշ աւթիւ և այլապէս
իրարու քով բերել, իրարու քով տոնել այդ հի-
անալի ամբողջութիւնը: Փրանսայի կենդանի պատ-
մութիւնն է որ երեւան կուգայ հոն ճաշակաւոր
դասաւորութեամբ մը: Որմեքուն վրայ պատկերա-
ցած գլուխ գործոցներէն շատեր կը վերաբերին
Լուի ԺԵ. ի, Լուի ԺԶ. ի, ևն. շրջաններուն: Ամէ-
նէն հինը պատկեր մէ որ Մէթիսի քարափը կը
ներկայացնէ Մոլիէնի օրով (1640): Սակայն այս ա-
սոնց մէջ ամէնէն հիանալին, ամէնէն հետաքրքրա-
շարժն են անշուշտ Հռոմի թագաւորին (նաբոլէոն
Ա. ի որդին) օրրանն եւ փոքրիկ կառքը Վրոս
Աւստրիոյ: Կայսրը Վիեննայի թանգարանէն հա-
նելով Յանձնախումբին տրամադրութեան տակ
դիւր յօժարած է, իրեն եղած մասնաւոր խնդրա-
նաց վրայ: Օրրանն արուեստագիտական չքնաղ
գործ մըն է, նուրբ քանդակներով շինուած եւ հա-
մակ ոսկեզօծ. զայն եզերող վարդադոյն թաւի-
շին—քիչ մը գոյնը նետած՝ ժամանակի ազդե-
ցութեան տակ—մէջէն կը ցլանայ սառափէ վան-
դակը դեղակերտօրէն դրուագուած, որուն նուրբ
դաւաղանիկներուն վրայ սիրունիկ մեղու եր կը
քալեն դէպ ի սնարն ուղղուելով. ոտքերն ամալ-
թեղջիւրէ են, որոց խոյակները վեր կը վերցնեն
Զօրութիւնն եւ Արդարութիւնը: Հարթ քանդակ-
ները կը ներկայացնեն խորհրդաւոր կերպով
մէկ կողմէն Սէն գետը՝ որ իր բաղուններուն մէջ
կ'ընդունի կայսերազուն նորածինն եւ միւս կող-

մէն՝ Տիբերիան (Հռոմի գետը) որ գլուխը վեր-
ցնելով՝ եզէզներուն մէջէն իր շխանին արուս-
եակը կը դիտէ մեծ ուշադրութեամբ: Օրրանն օ-
գի հոսանքներէ կը պահպանէր վահանակերպ
ծածկոց մը, որուն վրայ դրուած է թեւաւոր Յաղ-
թութիւն մը՝ ձեռքերուն մէջ թագ մը բռնած:
Փոքրիկ կառքը ոչ նուազ գեղարուեստական գործ
մըն է. այս այն կառքն է որով Հռոմի դեռաւոր
թագաւորը կը դրօսնուր Սէն Գլուխ գետաօտա-
նին եւ իւլիւսի պարտէզին մէջ. մէրինոս ոչ-
խարներ լծուած էին անոր: Թաւապատ նստարա-
նով եւ բարձիկներով, ճիւղն զոպանակներով, դեղա-
տետիլ պատկերներով գոհար մ'է ան եւ կայսերա-
չունի մը արժանի: Ուշադրութեան արժանի են
նաեւ Զարին կողմէ զըրկուած 15 գեղեցիկ ջրա-
նկարներ որք Բարիդի գլխաւոր տեսարանները կը
ներկայացնեն եւ շինուած են Բէրսիէ եւ Փոնդէն
երեւելի արուեստագէտներու ձեռքով Սլեքսան-
դր Ա. Ռուսիոյ կայսեր յանձնարարութեամբ:

Իտալիոյ տաղաւար, որ Սէնի քարտիկին վրայ
կը բարձրանայ, 16րդ դարու վնետիւնն ճար-
տարապետ Էթեամբ շինուած է: Դոթական ճար-
տարապետութիւնը, որ Հիւսիսի երկիրներուն յա-
տուկ է, մեծ յառաջդիմութիւն ըրած չէ Իտալիոյ
մէջ: Իտալացի արուեստագէտները կը գործածեն
զայն զուտ լատինական ձեւերը փոխելու համար
միայն: Իտալիոյ տաղաւարին մէջ աչքի կը զարնէ
ընդօրինակութիւնը Տէլլա Գարդայի գրան, որ
1435ին շինուած է Պարդօլօմէօյի ձեռքով: Դուռը
կը ներկայացնէ կամար մը որ ութ անկիւն աշ-
տարակներ ունեցող սիւններու վրայ հաստատուած
է: Սիւններուն ճակատը կը գտնուին ցցուակներ
ու արձաններ: Սիւնները միացած են եռանկիւն
կամարով մը որուն ճիշտ մէջտեղը նկարուած է
Սաւուայի արքայական տան զինանշանը: Իտալիոյ
տաղաւարին արտաքին մասը գեղեցիկ տեսարան
մը կը պարզէ: Ներքին զարդարանքներն ալ շատ
խնամքով եղած են. Իտալիա հոն ցուցադրած է
վնետիկեան գեղահիւս ժանեակներ: Մուրանօյի
համբաւաւոր ապակեղէն ապրանքներ, նրբար-
ուեստ արձաններ ու յիշատակարաններ, ինչպէս
նաեւ Մօզաիքներն որ Իտալիոյ արուեստական
փառքը կը կազմեն:

Պարսկական տաղաւար. — Պարսկական տա-
ղաւարը ճշգրիտ ընդօրինակութիւնն է Մէտիէ.

սէի Մատէրի Շահի պալատին իր կը գտնուի ըն-
պահանի մէջ և դարերէ ի վեր սքանչացում կը
պատճառէ այցելուններուն: Տաղաւարին պատուոյ
դուռը, որ 14 մէդր բարձրութիւն ունի, կը
բացուի գեղեցիկ հրապարակի մը վրայ, պէտի-
ական տաղաւարին մօտ: Դրան կամարին վրայ
պարսկերէն բառերով գրուած են Շահին անունը
ու տիտղոսները, Պատուոյ սրահը զարդարուած է
արեւելեան ճոխութեամբ: Իր գահին ճակարակ, կա-
րասիներով, հնագիտական անօթներով, ճոխ գոր-
գերով, հին զէնքերով, ազնիւ քարերով, պերո-
զակներով, Պարսից ծոցի ուլունքներով եւ ոսկե-
ճամուկ մետաքսահիւս կերպաններով ու ասեղնա-
գործութիւններով պատուոյ սրահն այնպիսի ակ-
նախտիւ տեսք մը ունի որ կարծես թէ հազար և
մէկ գիշերներու իշխան մը պիտի հիւրընկալէ: Պար-
սից Շահը Բարիզ պիտի ժամանէ Օգոստ. Յին եւ
այս պատճառաւ տաղաւարին քովիսէրը Զօր. Քի-
թապէի Խան, արքայական դահլիճ մը պատրաս-
տած է ուր պիտի հիւրընկալուի Մուշաֆէրէտ-
տին Շահ: Դահլիճին ճոխութեան ու զարդարանքի
մասին պաշտօնաւոր մը տալու համար կը բաւէ ը-
սել թէ մէկ միլիոն ֆր. է աւելի ծախք դացած
է, առանց հաշուելու գեղարուեստական առարկա-
ները: Բացման ներկայ գտնուող հանդիսատեսք
կոխեցին հիանալի գորգի մը վրայ որ 20,000 ֆր.
արժէք ունի: Պատուոյ սրահէն ետք կողքայ պարս-
կական սրահաւոր, ուր ցուցադրուած են Քիրմանի
գորգերը, որ աշխարհիս մէջ մէկ հատիկ են: Պա-
ղարին տարածութիւնը փոքր ըլլալով, կարելի
եղած չէ ի ցոյց դնել խոշոր հիանալի գորգ մը
որ 50,000 ֆր. արժէք ունի: Առաջին յարկին
մէջ շինուած է տեսակ մը թատրոն, ուր ասիա-
կան սրախաղութիւններ եւ արեւելեան պարեր տե-
ղի պիտի ունենան:

(Շար)

Տ.

ՆՈՐ ԼՈՅՍ ՍԸ

Աշուրնիս լոյս, այսուհետեւ մօտի, ճրագի, բարիւղի
և զամբարի պէտք չպիտի ունենանք, շնորհիւ նոր գիւ-
տի մը, որու մասին Էյէֆդրիսիդէ գիտական հանգէսը
սապէս կը գրէ իր վերջին թիւերէ մէկուն մէջ.

«Նիւ Եօրքի մէջ 25,000.000 տոլար գրամագլու-
խով ընկերութիւն մը կազմուելու վրայ է նոր գիւտի մը
շահագործմանը համար, որ սովորութեանց և բարքերու
մէջ երկաթուղիի գիւտին բերած յեղաշրջումին չափ փո-
փոխութիւն առաջ պիտի բերէ:

«Ամերիկացի քիմիագէտ Պ. Բօր տը Թէթանֆան,
յիշեալ ընկերութեան թողած է իր մէկ գիւտին արտօ-
նագիրը, որով օդահան մեքենաներու միջոցաւ առաջուը-
նէ մէջը պարպուած գունտերով և քիմիական միջոցնե-
րով նոր լոյս մը յառաջ կը բերէ, որ արեւուն լոյսին կը
նմանի: Օդային կապի կտուցներու լոյսէն աւելի փայլուն
է և ձէթի լոյսին չափ աչք չի յոգնեցներ:

Բօր քիմիագէտին լոյսը մինչև հիմա անձանթ ըս-
ղադրութեան մը արդիւնքն է: Այս լոյսը արտադրելու
համար մեքենաներու կամ գործիքներու պէտք չկայ: Լոյսը
անգամ մը որ ապակիէ գունտին մէջ փակուած է, այլևս
չի մարիր: Ուղուած լոյսին շատ կամ քիչ ըլլալը կա-
խում ունի գունտին աւելի կամ նուազ մեծութենէն:

Կարելի պիտի ըլլայ դուռնը գրամագլանակի կամ սիկարի
տուփի մէջ իսկ պահել և ուղուած ատեն հանել, յստակ
տեսնել կարենալու համար: Վախճալիք ամենեւին վտանգ
չկայ. եթէ գունտը կոտրի, լոյսը կը մարի, առանց ու և է
պայթման: Ընկերութիւնը պաշտօն տուած է իր Բարիդի
թղթակից Պ. Քիւվիլէի, որպէս զի իր արտօնութեան
պահպանութեանը համար պէտք եղած ձեւակերպու-
թիւնները կատարէ:

ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍՓԵՐ

Կին առ քու հաւնելովդ և ոչ թէ ուրիշներու
հաւնեցներու համար:

Ժ. Ժ. Ռուսօ.

Ամբողջ Եւրոպան կրնամ հաշտեցնել, բայց
երկու կին չեմ կրնար հաշտ պահել իրարու հետ.

Լուի ԺԴ.

Աղջկանց կարմրիլը երբեմն անմեղութեան
այցաքարտն է. երբեմն ալ մահազգը:

Ա. Տիւմա

Հնազանդէ՛ք ու հօրդդ ո՛վ աղջիկ.

Եթէ կապիկ մը իսկ տալ ուզէ՛ք երիկ.

Մօլիեր

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

ԻՆՉ ԵՍ ԴՈՒՆ

Տժգոյն առ դեմքովդ
Աստղիկն ես դու վէս .
Աղջիկ, նայումսովդ
Շատեր կ'սպաննես:

Մտերմ խորշակ
Փշես շարունակ:

Թէ դժոխք իջնենք,
Սասանան ես բուն .
Թէ Երկինք ելնենք,
Հրեշտակն ես դուն:

Հոգովդ անծանօթ
Աշխարհն քերես քօթ:

Հովսի ճարերու
Շուշանը կ'երուսա .
Քեզ պաշտողներու
Փռչ, աստակ կուսա:

Ու հպարտ ու վէս
Մտեր կ'արխան:

Երբեմն արեւն ես,
Երբեմն ալ խաւար,
Այսօր մազնիսես,
Վաղիս վանես սար:

Առնցմէ ոչ միւն
Քեզի նմանին:

Ձր գիտենք ի՞նչ ես .
Մարմարէ արձա՛ն .
Դիտենք, որ շնչես
Ճիշդ մեզի նման:

Դիտենք որ ունիս
Թէ արխան թէ միս:

Երկինքէն վանուած
Ղեւն ես յարահետ .
Խաղ մ'է որ խաղաց
Աստուած մարդոց հետ:

Բայց է՛ր աշխարհն դուն
Ընայիր սիրուն:

Թէ չես հրեշտակ,
Չես դեռ սիրուն,
Թէ չես մարդ ես,
Հապա ի՞նչ ես դուն:

Օհ, յար Արաքսի
Ձր ճանչցանք քեզի:

ԱՊՈՒ—ՆԱՏԱՐԱ

Ծ Ի Ծ Ա Ղ

 Ա.ԶԴ — Քիչ օրէն պիտի հրատարակուի «Երբ
մէթոս Օլէնտորֆեան դրութեամբ քերականութիւն մը,
որուն մէջ բայերը գոյական անունի պէս պիտի կրնան
հոլովուիլ: Զոր օրինակ.

Ուզա. — Առնեմ.

Սեռա. — Վէրմէմ.

Տրակ. — Չունիմ.

Հայց. — Հոս չէ.

Բացա. — Հոգս չէ.

Գործ. — Իմ գործս ասանկ է:

Առաւ-փախաւութեան մասնագետ ըլլալ ուզողնե-
րը այժմէն կը հրաւիրուին առիթէն օգտուելով մէյմէկ
օրինակ գնելու այս գարամտիկ բերականութենէն:

Վարժարանաց համար ուզուածին չափ զեղջ:

ԻՄՈՒՆՕՖՍԻՉ և ԸՆԿ.

5

ՀԵՌԱԴՐԱԿԱՆ (Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.)

Նիւ Եորք

«Հայրենիք» լրագիրը մեծ յաղթանակ մը
տարաւ, կարին քաղաքը առածի չափ. այն է
ձեռք ձգեց Խաղ վարդապետին հրաժարականը՝
զոր տուած էր նա իր . . . հին խալաթին.
Խմբագրութիւնը՝ ոտքը գետնէն կտրած՝ իւր
այս հիանալի եւ պանծալի մեծ յաղթանակը
կարմրագոյն ներկեց . . . զատկի հաւկիթի պէս:

Մարիճա գետ

Թուաբանութեան դասատուն՝ դիմացի տան-
տիկնոջ հետ անձայն հեռագիր (իշմարաբանական
սիրահարութիւն) փոխանակելու վրայ է:

Քամաթքա

Առաջնակարգ յեղափոխական (?) մը հարց-
ման մը պատասխանելով ըսաւ թէ, «Ինք իր ա-
պագան շնկած է. Զաքըրեանի պէս ապուշ չէ որ
ծերութեանը մուրայ»:

Մ քաղաք

Աղքատաց բաժնուելու համար Եւրոպայէն
զրկուած սնտուկ մը քիչ գործածուած գլխարկ-
ներ՝ անցեալ շաբթու հոս ալ սկսան ըշպորտանե-
րով ծախուիլ, հատը 5 զրուշի:

Սրճարանի մը մէջ երկու պարոններ իրա-
րու հետ վիճաբանած ժամանակ, անոնցմէ մէկը
պոռաց, «Պարոն, դամիդէն քեզի տուած ամսակա-
նը կտրելուն պատճառաւ է որ հիմա անոր դէմ
սկսար խօսելու»: Ասկէ սա կը հասկցուի թէ՛ գոմի-
դէն՝ աղգէն հաւաքած գրամներէն մաս մըն ալ
կարգ մը կոյկոյճիներու կը յատկացունէ եղեր:

Отговорникъ М. Сконевъ

Печатница „Взаимность“ — Варна.